ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25-Ա

«29» հուլիսի - 2016թ. թիվ 6 նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 29-ի թիվ 6 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Ա Գրիգորյան | ------------------- | ------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ------------------- | ------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ------------------- | ------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հուլիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2016 թվականի
հուլիսի 29-ի թիվ 6
նիստի N 25-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 29-ի 6 նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ Դրամական օգնություն հատկացնելու մասին.

3/ Գումար հատկացնելու մասին.

4/ Համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26 -Ա

«29» հուլիսի - 2016թ. թիվ 6 նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը և համայնքի բնակիչների դիմումները.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հուլիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $11^{30}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2016 թվականի
հուլիսի 29-ի թիվ 6
նիստի N 26-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1/ Հայարփի Նազարյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

2/ Անահիտ Դավեյանին - 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ.

3/ Միեր Շամոյանին - 55000 /հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ.

4/ Արթուր Բարսեղյանին - 55000 /հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 27-Ա

«29» հուլիսի - 2016թ. թիվ 6 նիստ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և համայնքապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 0161 ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածից 504 285 /հինգ հարյուր չորս հազար երկու հարյուր ութսունհինգ / Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել մանկապարտեզի շենք ցանկապատելու, պարի և սպորտի սենյակը վերանորոգելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 0161 ծրագրի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածից 850 000 /ութ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել համայնքի ճանապարհները ընթացիկ նորոգելու նպատակով:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածից 262 200 /երկու հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել պարի և սպորտի սենյակի վերանորոգման համար շինարարական նյութեր ձեռք բերելու նպատակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------- | ---------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հուլիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28-Ն

«29» հուլիսի 2016 թ. թիվ 6 նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող 04-048-0121-0038 ծածկագրի 6442 քմ գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը, 04-048-0201-0004 ծածկագրի 928 քմ և 04-048-0201-0013 ծածկագրի 1137 քմ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերը մրցութային կարգով, 25 տարի ժամկետով, տրամադրելու վարձակալության:

2. Մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրման վարձավճարի չափ սահմանել՝

1/ 04-048-0121-0038 ծածկագրի 6442 քմ 3-րդ կարգի վարելահողի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, մրցույթի մեկնարկային քայլը՝ 750 /յոթ հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ.

2/ 04-048-0201-0004 ծածկագրի 928 քմ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատային նշանակության հողամասի համար՝ 10000 /տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, մրցույթի մեկնարկային քայլը՝ 500 /հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ.

3/04-048-0201-0013 ծածկագրի 1137 քմ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատային նշանակության հողամասի համար՝ *12000 /տասներկու հազար/* Հայաստանի Հանրապետության դրամ, մրցույթի մեկնարկային քայլը՝ 600 /վեց հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ.

2. Մասնակցության վճար սահմանել 5000 /հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Առաջարկել գյուղապետին հանձնարարելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի վարձակալությամբ տրամադրող հանձնաժողովին իրականացնելու սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | -------------------- | -------------------- | -------------------- |
| Գ. Սարգսյան | -------------------- | -------------------- | -------------------- |
| Խ.Տերտերյան | -------------------- | -------------------- | -------------------- |

ԼՈւՍԱԳՅՈւՂԻ ԳՅՈւՂԱՊԵՏ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հուլիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $12^{30}$